ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՏԴ 330
DOI: 10.56246/18294480-2024.16-152

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼՅՈՒԴՄԻԼԱ
ՀՀ ԱԺ նախագահի տեղակալի օգնական
էլփոստ՝ milasoghomonyan@gmail.com

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կառուցվածքային բարեփոխումների էությունը, միջազգային մի շարք կառույցների կողմից վերջին տարիներին Հայաստանում կառուցվածքային բարեփոխումների իրականացման շրջանակներում և դրանց վերաբերյալ ներկայացվող առաջարկությունները և Հայաստանի պետական քաղաքականության ուղղվածությունը կառուցվածքային բարեփոխումների իրականացման համատեքստում:

Ըստ էության կառուցվածքային բարեփոխումներն ազդում են տնտեսության առաջարկի վրա, քանի որ վերացնելով ապրանքների և ծառայությունների արդյունավետ արտադրության խոչընդոտները՝ դրանք պետք է նպաստեն արտադրողականության, ներդրումների և զբաղվածության բարձրացմանը: Մյուս կողմից, բարեփոխումները կարող են ուղղված լինել կոնկրետ ոլորտների, օրինակ՝ որոնք խրախուսում են նորարարությունը հիմնական ոլորտներում: Կարևորը, սակայն, այն է, որ աճը լինի հավասարակշռված: Սա նշանակում է, որ հաշվի են առնվում նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են սոցիալական արդարությունը և ներառականությունը:

Ինչպես նշել է Ճապոնիայի կենտրոնական բանկի կառավարիչ Հարուհիկո Կուրոդան. «Կառուցվածքային բարեփոխումները, ապականոնակարգումները շատ կարևոր են երկարաժամկետ հեռանկարում, և դրանք զգալի ազդեցություն կունենան աճի ներուժի վրա, բայց ըստ էության դա ժամանակ է պահանջում, ուստի հուսով եմ, որ մարդիկ ավելի համբերատար կլինեն»:

Այսպիսով, կառուցվածքային բարեփոխումների իրականացումը կարևորվում է բոլոր երկրներում՝ հատկապես՝զարգացող տնտեսությամբ, այդուհանդերձ՝դրանց արդյունքները տեսանելի և շոշափելի են երկարաժամկետ հեռանկարում:

Բանալի բառեր՝ *կառուցվածքային բարեփոխում, ներառական աճ, կառուցվածքային բացերի գնահատում, բարձր տեխնոլոգիական արդյունաբ-*

երություն, միջազգայյին կառույցներ, գիտատեխնոլոգիական զարգացում, ռազմարդյունաբերական զարգացում:

Տնտեսության կառուցվածքային բարեփոխումներին անդրադառնալուց առաջ փորձենք որոշակի գաղափար կազմել ՀՀ տնտեսության կառուցվածքի, մասնավորապես համախառն ներքին արդյունքում տնտեսության ճյուղերի մասնաբաժնի և դրանց փոփոխության դինամիկայի վերաբերյալ: Եվ այսպես, 2000-2005 թվականների ընթացքում հայրենական տնտեսության մեջ համախառն ներքին արդյունքի արտադրության մեծ մասը բաժին է ընկել գյուղատնտեսությանը և արդյունաբերությանը: 2006 թվականին կտրուկ աճեց շինարարության մասնաբաժինը, և այս միտումը պահպանվեց մինչև 2008 թվականը, մասնավորապես համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, երբ տեղի ունեցավ Միացյալ Նահանգների, այսպես կոչված, բնակարանային պղպջակների պայթյունը և դրան հաջորդած հիփոթեքային ճգնաժամը այնուհետև հանգեցրին մի շարք խոշոր բանկերի սնանկացման, որի հետևանքով էլ համաշխարհային մակարդակով ֆինանսական համակարգերի ճգնաժամի:

Գծապատկեր 1. Տնտեսության ճյուղերի մասնաբաժինը ՀՆԱ կառուցվածքում, տոկոս[1]:



[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազաներ, ազգային հաշիվներ, https://armstat.am/am/?nid=202

2009 թվականից սկսած մինչ օրս հայրենական տնտեսության խոշորագույն ճյուղը հանդիսանում է ծառայությունների ոլորտը, որը, 2016 թվականից սկսած, կազմում է 40 տոկոսից ավելին:

Այսպիսով, կարող ենք ընդգծել, որ վերջին 22 տարիների ընթացքում հայրենական տնտեսությունն անցել է կառուցվածքային մի շարք փոփոխություններ միջով: Ընդ որում տնտեսության կառուցվածքում այս կամ այն ճյուղի գերակշռությունը վստահաբար կախված է եղել տվյալ ժամանակաշրջանի հրամայականներից և տնտեսական պետական քաղաքականության առաջնահերթություններից:

Կառուցվածքային բարեփոխումները, ըստ էության, միջոցառումներ են, որոնք փոխում են տնտեսության կառուցվածքը, ինստիտուցիոնալ և կարգավորող շրջանակը, որտեղ գործում են բիզնեսներն ու մարդիկ: Դրանք նախատեսված են ապահովելու տնտեսության ձևավորումը, որպեսզի այն կարողանա ավելի լավ իրացնել իր աճի ներուժը հավասարակշռված ձևով[1]:

Այսպիսով, կառուցվածքային բարեփոխումներն իրենցից ներկայացնում են քաղաքականություն, որն ուղղված է երկրի տնտեսական ցուցանիշների բարելավմանը: Նման քաղաքականությունների բազմազանությունը մեծ է, դրանք ներառում են ապրանքների և ծառայությունների շուկաների կարգավորում, առևտրի ազատականացում, ֆինանսական և կապիտալի շուկաների, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացում և այլն:

Աճը խթանելու և նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունելի է այն տնտեսական ռազմավարությունը, որը հիմնված է հարկաբյուջետային պատասխանատվության, ներդրումների և կառուցվածքային բարեփոխումների վրա[2]:

Կառուցվածքային բարեփոխումները վերացնում են աճի հիմնական շարժիչների խոչընդոտները՝ ազատականացնելով աշխատանքի, ապրանքների և ծառայությունների շուկաները, դրանով իսկ խթանելով աշխատատեղերի ստեղծումն ու ներդրումները և բարձրացնելով արտադրողականությունը: Դրանք նախատեսված են բարձրացնելու տնտեսության մրցունակությունը, աճի ներուժը և հարմարվողականության կարողությունը:

---

[1] Եվրոպական միության կենտրոնական բանկի կողմից տրված սահմանում, https://www.ecb.europa.eu/ecb/educational/explainers/tell-me/html/what-are-structural_reforms.en.html

[2] Եվրոպական հանձնաժողով, https://commission.europa.eu/business-economy-euro/growth-and-investment/structural-reforms/structural-reforms-economic-growth_en

Կառուցվածքային բարեփոխումներ տերմինը ներառում է միջոցառումների լայն շրջանակ: Այդուհանդերձ, կառուցվածքային բարեփոխումներին բնորոշ հիմնական քաղաքականություններն են.

1. աշխատաշուկաները դարձնել ավելի հարմարվող և ճկուն արձագանքող,
2. ծառայությունների ոլորտների ազատականացում, մրցակցության բարձրացում ապրանքների և ծառայությունների շուկաներում և/կամ առանձնահատուկ ոլորտներում, կամ ընդհանուր բիզնես միջավայրի բարելավում,
3. նորարարությունների խրախուսում,
4. հանրային հարկային համակարգերի որակի բարելավում,
5. պետության սոցիալական ոլորտում ծերացող բնակչության խնդիրների լուծում:

Կառուցվածքային բարեփոխումների իրականացման շրջանակներում Եվրոպական Միության երկրների համար կարևորվում է Եվրոպական հանձնաժողովի դերը, քանի որ օգնում է ԵՄ երկրներին բացահայտելու բարեփոխումների առաջնահերթությունները և արդյունավետ քաղաքականությունն իր տարեկան աճի հետազոտության մեջ: Բացի դրանից՝ Հանձնաժողովը վերահսկում է երկրների առաջընթացը և տրամադրում է խորհրդատվություն:

Արժույթի միջազգային հիմնադրամի մեթոդաբանության համաձայն քաղաքականություն մշակողների կողմից կառուցվածքային բարեփոխումների իրականացումը հաճախ նպատակ ունի վերականգնելու տնտեսությունը ճգնաժամային իրավիճակից և նպաստելու տնտեսական աճին[1]: Այսպիսով, քաղաքականություն մշակողների խնդիրն է պարզել, թե կառուցվածքային բարեփոխումների որ համակցություններն ու հաջորդականությունները կարող են լինել առավել արդյունավետ և ապահովել ամենամեծ աճը: Այնուամենայնիվ, հիմնական մարտահրավերն այն է, որ կառուցվածքային բարեփոխումներն ի սկզբանե դժվար է չափել, քանի որ դրանք հաճախ կապված են շուկաների արդյունավետության բարձրացմանն ուղղված քաղաքականության հետ: Կառուցվածքային բարեփոխումների քանակական գնահատման ընդհանուր մոտեցումները հիմնված են անարդյունավետությունը վերացնող նորմատիվային փոփոխությունների ուժի վրա: Թեև այս մոտեցումները արժեքավոր պատկերացումներ են տալիս քաղաքականության գործողությունների ազդեցության վերաբերյալ, դրանք կարող են ամբողջությամբ չարտացոլել բարեփոխումների

[1] ԱՄՀ աշխատանքային փաստաթուղթ, «Կառուցվածքային բարեփոխումները և տնտեսական աճը», 2022 https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2022/09/15/Structural-Reforms-and-Economic-Growth-A-Machine-Learning-Approach-523396

արդյունքները, որոնք կախված են քաղաքականության իրականացման առանձնահատկություններից, ինչպես նաև այն միջավայրից, որտեղ իրականացվում են բարեփոխումները: Այս մոտեցումների մեկ այլ թերությունն այն է, որ դրանք սահմանափակ թվով երկրներ են ընդգրկում տվյալների սահմանափակ հասանելիության պատճառով: Այլ մոտեցումները հիմնված են հետազոտությունների արդյունքում ստացված կառուցվածքային արդյունքների վրա՝ կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունը գնահատելու և երկրների միջև համեմատական վերլուծություն իրականացնելու նպատակով: Թեև այս ցուցանիշները տեղեկատվական են կառուցվածքային կատարողականի մասին, էմպիրիկ վերլուծությունը բարդանում է ցուցիչների մեծ քանակի, դրանց միջև հարաբերակցության և դրանց սուբյեկտիվ բնույթից բխող շեղումների պատճառով:

Կառուցվածքային բարեփոխումների կատարողականը չափվում է քանակական ցուցանիշներով: Այս ցուցանիշները այնուհետև դասակարգվում են վեց ավելի լայն մակրոկառուցվածքային ոլորտների: Դրանք են.

1. Իրավական համակարգ, որը ներառում է կառուցվածքային ցուցանիշներ՝ կապված կոռուպցիայի, կառավարման, հանցավորության, օրենքի գերակայության և սեփականության իրավունքների պաշտպանության հետ:

2. Ֆինանսական համակարգ, որն ընդգրկում է ֆինանսական զարգացմանը, ֆինանսական ծառայությունների հասանելիությանը և բանկային հատվածի ու ֆինանսական շուկաների կայունությանը վերաբերող կառուցվածքային ցուցանիշները:

3. Արտադրանքի շուկաներ, որոնք պարունակում են կառուցվածքային ցուցանիշներ մրցակցության, ոչ պաշտոնական հատվածի և ապրանքային շուկաներում վարչական և կարգավորող բեռի վերաբերյալ:

4. Աշխատանքի շուկաներ, որոնք ներառում են կառուցվածքային ցուցանիշներ՝ կապված նվազագույն աշխատավարձի և այլ կարգավորումների հետ, որոնք ազդում են աշխատաշուկայի ճկունության վրա:

5. Հարկային քաղաքականություն, որն արտացոլում է տարբեր հարկերի հետ կապված խթանների խեղաթյուրումները:

6. Առևտուր և բացություն, որն ընդգրկում է առևտրի սակագները և ոչ սակագնային խոչընդոտները:

ԱՄՀ կողմից բացառվում են ցիկլային ֆինանսական ցուցանիշները, որոնք արտացոլում են ոչ թե ֆինանսական հաստատությունների որակը, այլ բիզնես ցիկլը: Ցիկլային ֆինանսական ցուցանիշների օրինակներ են տրամադրված ընդհանուր սինդիկացված վարկերի ծավալը և մասնավոր վարկերի հասանելիությունը:

Հարկ է նշել, որ ինչպես բոլոր երկրների դեպքում այնպես էլ Հայաստանում իրականացվող կառուցվածքային բարեփոխումները գտնվում են

միջազգային մի շարք կազմակերպությունների և կառույցների ուշադրության ներքո, ինչպես նաև վերջիններիս կողմից իրականացվում են այդպիսի բարեփոխումների վերլուծություններ և ներկայացվում են առաջարկություններ վերլուծական հոդվածների, նյութերի կամ հրապարակումների տեսքով: Անդրադառնալով հայրենական տնտեսությունում իրականացվող կառուցվածքային բարեփոխումներին և դրանցում միջազգային կազմակերպությունների և կառույցների ունեցած դերին՝ նշենք, որ դեռևս 1996-1997 թվականներին Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրած ֆինանսավորված ինստիտուցիոնալ բարեփոխումների, կառուցվածքային բարեփոխումների առաջին և երկրորդ ու կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկային ծրագրերը կարևոր նշանակություն ունեցան ՀՀ կառավարության ընդհանուր ռազմավարության համար՝ ուղղված մակրոտնտեսական կայունության ամրապնդմանն ու կառուցվածքային բարեփոխումների խորացմանը[1]: Համաձայն նշված ծրագրերի իրականացման վերաբերյալ ՀՀ կառավարության եզրակացության՝ այս վարկերն արդյունավետ էին ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների ծրագրի աջակցման առումով: Վերջինիս հիմնական նպատակն էր՝ իրականացնել էական փոփոխություններ էներգետիկայի, ոռոգման և խմելու ջրի, բանկային համակարգի, սեփականաշնորհման և ձեռնարկությունների վերակառուցման գործընթացի խթանման և առևտրի հետագա ազատականացման, ինչպես նաև առողջապահության, կրթության և սոցիալական ապահովության ոլորտներում:

Հիմնականում դիտարկելով վերջին 5 տարվա ժամանակահատվածում Միջազգային կառույցների կողմից Հայաստանում կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ իրականացված վերլուծությունները կարող ենք խոսել ներքոբերյալ մի քանիսի մասին առանձին-առանձին:

2018 թվականին Եվրասիական զարգացման բանկի կողմից հրապարակվեց «Հայաստանում կառուցվածքային բացերի գնահատումը՝ հիմնված Գլոբալ մրցակցության ինդեքսի վրա» վերտառությամբ մի վերլուծություն, որի արդյունքներն ամփոփելով՝ կարող ենք նշել, որ. «Հայաստանն այն երկրի օրինակն է, որն ավելի լավ առաջընթաց է գրանցում, քան ընդհանուր առմամբ սպասվում էր նմանատիպ եկամուտներ ունեցող երկրներից, սակայն բարեփոխումների առումով զիջում է տարածաշրջանի առաջատարներին:

[1] ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 5-ի նիստի արձանագրությունից քաղվածք թիվ 32 «Ինստիտուցիոնալ բարեփոխումների, կառուցվածքային բարեփոխումների առաջին եվ երկրորդ ու կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկային ծրագրերի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական եզրակացությանը հավանություն տալու մասին» https://www.irtek.am/views/act.aspx?aid=7413

Այսպիսով, կառուցվածքային բացերի գնահատումները ցույց են տալիս, որ երկիրը կառուցվածքային բարեփոխումների իրականացման հարցում դեռևս զիջում է Վրաստանին: Ավելի կոնկրետ, ՀՀ գործարարների գնահատականները մատնանշում են դանդաղ առաջընթացը բարեփոխումների հինգ ոլորտներից երեքում (ինստիտուտներ, ենթակառուցվածքներ և ֆինանսական շուկա): Բիզնեսի կողմից աշխատաշուկայի բարեփոխման կարգավիճակը համարժեք է Վրաստանի մակարդակին, իսկ ապրանքների շուկայի բարեփոխումը՝ դրանից բարձր: Այնուամենայնիվ, համեմատած այլ երկրների հետ, որոնք ունեն նմանատիպ եկամուտներ, տեսանելի են Հայաստանի որոշ հաջողություններ բարեփոխումների ոլորտում: Ինչ վերաբերում է աշխատաշուկայի բացերի մանրամասն գնահատմանը, ապա իրավիճակը պակաս լավատեսական է: Այս ոլորտում Հայաստանը աշխատավարձերի ճկունությամբ զիջում է համադրելի եկամուտներ ունեցող երկրներին, իսկ Վրաստանի համեմատ՝ զիջում է նաև բնակչության տնտեսական ներգրավվածության վրա հարկերի և արտոնությունների ազդեցության ցուցանիշով: Իշխանությունների գործողությունների վերլուծությունը ցույց տվեց նաև օրենսդրական ջանքեր՝ ուղղված երկրում ինստիտուցիոնալ իրավիճակի բարելավմանը և վերահսկվող ժամանակահատվածում բարեփոխումների իրականացմանը: Այդուհանդերձ, ձևակերպված էին չլուծված հարցեր՝ կապված աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու գործընթացի ճկունության, աշխատանքային միգրացիայի հակվածության, կանանց տնտեսական ներգրավվածության և աշխատավարձի և արտադրողականության միջև համապատասխանության հետ, որոնց քննությունը զգալի գործնական հետաքրքրություն է ներկայացնում իշխանություններին հետագա առաջարկությունների պատրաստման համար»[1]:

2019 թվականին ԱՄՀ կողմից հրապարակված վերլուծական աշխատանքում ընդգծվել էր հետևյալ միտքը, որ. «Կառուցվածքային բարեփոխումների կուռ փաթեթի վճռական իրականացումը կօգնի կայուն և ներառական աճի խրախուսմանը՝ մասնավոր հատվածի զարգացումը խթանելու, ավելի շատ ՕՈՒՆ ներգրավելու և դիվերսիֆիկացումը մեծացնելու միջոցառումների միջոցով: Օգտակար կլինեն նաև մարդկային կապիտալի բարելավման և աշխատուժի կազմում կանանց մասնակցության մեծացմանն ուղղված քայլերը[2]»:

---

[1] Եվրասիական զարգացման բանկ, «ASSESSMENT OF STRUCTURAL GAPS IN ARMENIA BASED ON THE GLOBAL COMPETITIVENESS INDEX»,2018, Special report, https://eabr.org/upload/iblock/a86/ASSESSMENT-OF-STRUCTURAL-GAPS-IN-ARMENIA.pdf

[2] Արժույթի միջազգային հիմնադրամ, «Republic of Armenia: 2019 Article IV Consultation and Request for a Stand-By Arrangement-Press Release; Staff Report; and Statement by the Executive Director for the Republic of Armenia», 2019 https://www.imf.org/en/Publications/CR/

Հարկ է նշել, որ ընդունված հնգամյա տնտեսական ծրագրի՝ Կառավարության ծրագրի առանցքում կառուցվածքային բարեփոխումների առաջ մղումն է՝ լայնահենք ներառական աճի ապահովման և մակրոտնտեսական կայունության պահպանման կուռ քաղաքականության համար:

Հաշվի առնելով կառուցվածքային բարեփոխումների իրականացման ընթացքում ԱՄՀ կողմից տարբեր երկրներին խորհրդատվության տրամադրման քաղաքականությունը ԱՄՀ և ՀՀ իշխանության միջև ձեռք բերված «Սթենդ-Բայ» վարկային պայմանավորվածության շրջանակներում, ի թիվս այլ աջակցության ուղղությունների նախատեսվում է նաև կառուցվածքային բարեփոխումների աշխուժացում: Այս համատեքստում նպատակն է իշխանություններին օգնել՝

ա) կառավարման և հաստատությունների ուժեղացման հարցում, ինչը երկար տարիներ գոյություն ունեցող խնդիր է,

բ) գործարար միջավայրի բարելավման հարցում՝ ներդրումների ներգրավման և ավելի ներառական ու երկարաժամկետ աճի մեկնարկը տալու համար,

գ) սոցիալական ապահովության ցանցի ծրագրերի բարելավման հարցում՝ առավել խոցելի խավի համար ավելի լավ կրթության և առողջապահության հասանելիության ներառմամբ[1]:

Ամփոփելով միջազգային կառույցների կողմից կառուցվածքային բարեփոխումների իրականացման շրջանակներում վերջին տարիներին ներկայացված առաջարկությունները՝ կարևոր է ընդգծել այն փաստը, որ թեև միջազգային կառույցները ունեն բավականին լուրջ վերլուծական մարդկային և գործիքային ռեսուրսներ և իրականացված վերլուծություններն ու տարբեր երկրներին ներկայացվող առաջարկությունները ունեն բավականին փաստարկված և խորքային բնույթ, այդուհանդերձ՝ դրանք կրում են խորհրդատվական բնույթ, և յուրաքանչյուր երկիր որոշում է կայացնում իրականացնելու այնպիսի կառուցվածքային բարեփոխումներ, որոնք համապատասխանում են տվյալ ժամանակաշրջանի պետական քաղաքականության նպատակադրումներին, տեսլականին, ինչպես նաև երկրի տնտեսական և անվտանգային առաջնահերթություններին:

Issues/2019/06/05/Republic-of-Armenia-2019-Article-IV-Consultation-and-Request-for-a-Stand-By-Arrangement-46968

[1] Արժույթի միջազգային հիմնադրամ, «Republic of Armenia: 2019 Article IV Consultation and Request for a Stand-By Arrangement-Press Release; Staff Report; and Statement by the Executive Director for the Republic of Armenia», 2019 https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2019/06/05/Republic-of-Armenia-2019-Article-IV-Consultation-and-Request-for-a-Stand-By-Arrangement-46968

Վերադառնալով այն գաղափարին, որ տնտեսության կառուցվածքում այս կամ այն ճյուղի գերակշռությունը, հետևաբար նաև կառուցվածքային բարեփոխումների իրականացման ուղղվածությունը վստահաբար կախված է եղել տվյալ ժամանակաշրջանի հրամայականներից և տնտեսական պետական քաղաքականության առաջնահերթություններից՝ կարող ենք նշել, որ ներկայումս, համաձայն ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի և 2050 վերափոխման ռազմավարության նպատակադրումների, իշխանության նպատակն է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական արդյունաբերական երկիր[1]: Նշվածը վերաբերվում է ոչ միայն ժամանակին համահունչ բարձր տեխնոլոգիական զարգացմանը, այլև ռազմարդյունաբերական համալիրի զարգացմանը՝ հատկապես հաշվի առնելով թե՛ աշխարհաքաղաքական իրավիճակը, թե՛ հատկապես Հայաստանի ներկայիս հետպատերազմյան և պատերազմական գործողությունների վերսկսման ամենօրյա վտանգը: Մասնավորապես.

1. Հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների կարևորությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության և անվտանգության համար՝ Կառավարությունը շարունակելու է նպաստել նորարարական համակարգի զարգացմանը և տարբեր ոլորտներում համակողմանի ներդրմանը[2]:

2. Կառավարությունը խթանելու է ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը՝ հիմնված հայաստանյան գիտահետազոտական ներուժի և միջազգային փորձի վրա:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել Հայաստանը բարձր տեխնոլոգիական արդյունաբերական երկիր դարձնելու հստակ ձևակերպված ռազմավարության և ճանապարհային քարտեզի բացակայությունը: Դեռևս 2019 թվականի դեկտեմբերին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման էր դրվել «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման ռազմավարությանը, Հայաստանի թվայնացման ռազմավարությանը և ռազմական արդյունաբերության համալիրի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը[3], որն այնուհետև այդպես էլ չհաստատվեց ՀՀ կառավարության

---

[1]Հայաստանի վերափոխման 2050 ռազմավարություն, https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf

[2] ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, https://www.gov.am/files/docs/4586.pdf

[3] Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման ռազմավարությանը, Հայաստանի թվայնացման ռազմավարությանը եվ ռազմական արդյունաբերության համալիրի զարգացման

կողմից: Մինչդեռ այնպիսի զարգացած տեխնոլոգիական երկրներ, ինչպիսիք են Սինգապուրը, Իսրայելը, Ամերիկայի Միացյալ Նահանգները և այլն ունեն գիտական և տեխնոլոգիական զարգացման հստակ տեսլական, ռազմավարություն և նախատեսվող միջոցառումների ճանապարհային քարտեզ:

Բացի դրանից՝ Հայաստանի Հանրապետության տնտեսությունում նորարարական բնույթի մոտեցումների կիրառմանը նպաստելու, ինչպես նաև այդ բնագավառում ընդունվող իրավական ակտերի արդյունավետության բարձրացման, արդյունաբերության ճյուղերի (այդ թվում՝ ռազմաարդյունաբերական համալիրի) և գյուղատնտեսության զարգացման ծրագրերի ուսումնասիրության, տնտեսական նոր ծրագրերի մշակման հիմնարար չափանիշների ձևավորման նպատակով ՀՀ վարչապետի դեռևս 2010 թվականի ապրիլի 7-ի «Գիտատեխնիկական խորհուրդ ստեղծելու մասին» N230-Ա որոշմամբ[1] ստեղծվել է գիտատեխնոլոգիական խորհուրդ և հաստատվել է դրա անհատական կազմը: Թեև որոշումն ուժը կորցրած ճանաչված չէ մինչ այսօր, այդուհանդերձ խորհրդի գործունեության և դրանց շոշափելի արդյունքների վերաբերյալ որևէ տեղեկատվություն առկա չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

Առաջին հերթին ձևավորել միջգերատեսչական հանձնաժողով, որի նպատակը կլինի գիտակրթական և տեխնոլոգիական (այդ թվում՝ ռազմարդյունաբերական) զարգացման հստակ տեսլականի, ռազմավարության ձևավորումը և ճանապարհային քարտեզի՝ միջոցառումների ծրագրի, կոնկրետ քայլերի ձևակերպումը: Ընդ որում հարկ է ընդգծել, որ ռազմավարության տեսքով քաղաքականության ձևավորման և հետևողական միջոցառումների ձևակերպման ու իրականացման արդյունքում զարգացում կունենա ոչ միայն երկրի տեխնոլոգիական ներուժը, այլ նաև գիտական, կրթական, արդյունաբերական, արտադրական, ռազմական և այլ ոլորտներ, ինչն իր հերթին կհանգեցնի ներառական աճին:

Նախորդ առաջարկության համատեքստում և ի լրումն դրա կարծում ենք, որ հնարավոր է առաջարկն իրականացնել նաև վերոնշյալ խորհրդի շրջանակներում՝ դրա կազմի փոփոխության և հստակ աշխատանքային

ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/2173/about

[1] 2010 թվականի ապրիլի 7-ի «Գիտատեխնիկական խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի թիվ 230-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=57374

կանոնակարգի ձևավորման պարագայում: Որպես օրինակ կարող է ծառայել ԱՄՆ նախագահին կից գործող գիտության և տեխնոլոգիայի հարցերով նախագահի խորհրդականների խորհուրդը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազաներ, ազգային հաշիվներ, https://armstat.am/am/?nid=202:

2. Եվրոպական միության կենտրոնական բանկի կողմից տրված սահմանում, https://www.ecb.europa.eu/ecb/educational/explainers/tell-me/html/what-are-structural_reforms.en.html:

3. Եվրոպական հանձնաժողովի կայք, https://commission.europa.eu/business-economy-euro/growth-and-investment/structural-reforms/structural-reforms-economic-growth_en:

4. ԱՄՀ աշխատանքային փաստաթուղթ, «Կառուցվածքային բարեփոխումները և տնտեսական աճը»,2022 https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2022/09/15/Structural-Reforms-and-Economic-Growth-A-Machine-Learning-Approach-523396:

5. ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 5-ի նիստի արձանագրությունից քաղվածք թիվ 32 «Ինստիտուցիոնալ բարեփոխումների, կառուցվածքային բարեփոխումների առաջին եվ երկրորդ ու կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկային ծրագրերի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական եզրակացությանը հավանություն տալու մասին» https://www.irtek.am/views/act.aspx?aid=7413:

6. Եվրասիական զարգացման բանկ, «ASSESSMENT OF STRUCTURAL GAPS IN ARMENIA BASED ON THE GLOBAL COMPETITIVENESS INDEX»,2018, Special report, https://eabr.org/upload/iblock/a86/ASSESSMENT-OF-STRUCTURAL-GAPS-IN-ARMENIA.pdf:

7. Արժույթի միջազգային հիմնադրամ, «Republic of Armenia: 2019 Article IV Consultation and Request for a Stand-By Arrangement-Press Release; Staff Report; and Statement by the Executive Director for the Republic of Armenia», 2019 https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2019/06/05/Republic-of-Armenia-2019-Article-IV-Consultation-and-Request-for-a-Stand-By-Arrangement-46968:

8. Հայաստանի վերափոխման 2050 ռազմավարություն, https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf:

9. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, https://www.gov.am/files/docs/4586.pdf:

10. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման ռազմավարությանը, Հայաստանի թվայնացման ռազմավարությանը եվ ռազմական արդյունաբերության համալիրի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/2173/about:

11. 2010 թվականի ապրիլի 7-ի «Գիտատեխնիկական խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի թիվ 230-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=57374:

THE ROLE AND NECESSITY OF STRUCTURAL REFORMS IN THE CONTEXT OF ENSURING INCLUSIVE GROWTH OF THE ARMENIAN ECONOMY

GEVORGYAN LYUDMILA
Assistant to Vice President of the National Assembly of the Republic of Armenia
e-mail: milasoghomonyan@gmail.com

The purpose of the study is to examine the essence of structural reforms, the recommendations presented in recent years by a number of international organizations in the framework of the implementation of structural reforms in Armenia, and the direction of the state policy of Armenia in the context of the implementation of structural reforms.

Essentially, structural reforms affect the supply side of the economy because, by removing barriers to the efficient production of goods and services, they should boost productivity, investment, and employment. On the other hand, reforms can be targeted at specific sectors, such as those encouraging innovation in key industries. What is important, however, is that growth is balanced. This means that factors like social fairness and inclusion are also taken into account.

As Governor of the Bank of Japan Haruhiko Kuroda mentioned, "Structural reforms, deregulations are very important in the long term and they will have significant impact for growth potential, but by nature it takes time so I hope people are more patient."

Thus, structural reforms are important in all countries, especially those with developing economies, but their results are visible and tangible in the long term.

Keywords: *structural reform, inclusive growth, assessment of structural gaps, high-tech industry, international organizations, scientific and technological development, military-industrial development.*

РОЛЬ И НЕОБХОДИМОСТЬ СТРУКТУРНЫХ РЕФОРМ В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ ИНКЛЮЗИВНОГО РОСТА ЭКОНОМИКИ АРМЕНИИ

ГЕВОРГЯН ЛЮДМИЛА
Помощник заместителя Председателя НС РА
электронная почта: milasoghomonyan@gmail.com

Целью исследования является изучение сущности структурных реформ, рекомендаций, представленных в последние годы рядом международных организаций в рамках реализации структурных реформ в Армении, и направления государственной политики Армении в контексте реализации структурных реформ.

По сути, структурные реформы затрагивают сторону предложения в экономике, потому что, устраняя барьеры на пути эффективного производства товаров и услуг, они должны способствовать повышению производительности, инвестиций и занятости. С другой стороны, реформы могут быть нацелены на конкретные отрасли, например, те, которые поощряют инновации в ключевых отраслях. Однако важно, чтобы рост был сбалансированным. Это означает, что учитываются также такие факторы, как социальная справедливость и инклюзивность.

Как отметил управляющий Банка Японии Харухико Курода: «Структурные реформы, дерегулирование очень важны в долгосрочной перспективе и окажут значительное влияние на потенциал роста, но по сути это требует времени, поэтому я надеюсь, что люди будут более терпеливы».

Таким образом, проведение структурных реформ важно во всех странах, особенно с развивающейся экономикой, однако их результаты видны и ощутимы в долгосрочной перспективе.

Ключевые слова: *структурная реформа, инклюзивный рост, оценка структурных пробелов, высокотехнологичная промышленность, международные организации, научно-технологическое развитие, военно-промышленное развитие.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.05.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 10.06.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: